



# Գոր

Հայոց Յորենի Արտերուն Պահապան Աստուածը

*Ասք՝ Ալիծ Աղպապեան  
Նկար՝ Վաչագ*

Հ եռու՛, շա՛տ հեռու  
սակայն մեր սրտերուն շատ  
մօտ

Վանայ Ծովէն արեւմուտք  
գիւղի մը մէջ  
պատանի մը կ'ապրէր  
անունը Գոր:   
Յերեկը  
Գորը  
գիւղին արտերուն մէջ  
ոտաբոսիկ կը վազվզէր  
կը ցատկոտէր  
ծառ կը մագլցէր  
քարերը  
ժայռերը կը շօշափէր  
հոս կը նայէր  
հոն կը նայէր  
հեռու-մօտիկ  
վեր-վար  
ամէն ինչ կը դիտէ՛ր  
կը զննէ՛ր,  
տերեւ-ծաղիկ  
կը հոտուրտա՛ր...  
Իսկ գիշերները  
անտառին ծառերուն տակ պառ  
կած՝  
քուն կը մտնէր.  
հողին մօտիկ ըլլալ շա՛տ կը  
սիրէր:  
Գորին ականջը սուր էր.  
ծառերուն սօսափունին  
զեփիւռին փսփուքին  
ուշի-ուշով կը հետեւէր.  
կը լսէր ամենալուռ ձայները՝  
թռչուններուն թեւերուն  
թափահարումը  
միջատներուն թռթոցը  
թիթեռնիկը  
հո՛ս է,  
հո՛ն է,

տես հո՛ս, հո՛ս...

Գիւղացիները շա՛տ կը սիրէին  
զինք.  
դէմքը ցորենագոյն  
ճակտին մազափունջը ոսկեղնի  
աչքերը կայծ-կայծ  
հոգիին մէջ կա՛մք  
մարմնին մէջ կորով  
եղանը՝  
այսինքն  
ցորեն հաւաքելու գաւազանը  
միշտ ուսին:  
Եւ Գորը համեստ էր.  
ի՛նքն ալ չէր գիտեր  
թէ հայոց ցորենի արտերուն  
պահապան աստուածն էր:  
Ամէն տարի  
գարնան սկիզբը  
մէկ ա՛յս կողմէն  
մէկ ա՛յն կողմէն  
մօտիկ ու հեռու գիւղերէն  
Գորին ականջներուն կը հասնէին  
գիւղացիներու

**հո՛ն**

**հո՛ն**

**հո՛ն**

**հո՛ն-ները**

լեռներն ալ  
մէկ ա՛յն կողմէն  
մէկ ա՛յս կողմէն  
կ'արձագանգէին

**հո՛ն**

**հո՛ն**

**հոռո՛...**

Իսկ ի՛ր գիւղէն՝  
Գորը

երբ կը լսէր գիւղացիներուն

**թու՛նդ**

**հո՛նո**

**հո՛նո**

**հո՛նո**

**հոռո-ները**

ամբողջ մամինը

բերկրանքով կը լեցուէր:

**Լուսը լուսացա՛ւ**

**բարին շատացա՛ւ**

կանչելով՝

հոգւով

հաւատքով

գիւղացիները

կը հերկէին արտերը

իսկ

լեռները

դիմացի կողմէն

կ'արձագանգէին

**հո՛նո**

**հո՛նո**

հոռո՛... .

**լուսացա՛ւ**

**լուսացա՛ւ**

լուսացա՛ւ... .

**շատացա՛ւ**

**շատացա՛ւ**

շատացա՛ւ... .

Գորը գիտէր թէ՛

գիւղացիները

արօրը լծած

սկսած էին

ակօս-ակօս

արտը հերկել

հողը փորել՝

փորել ու փխրել

որպէսզի

ցորենի հատիկները ցանէին,

հատիկներէն

ծլէին ու մեծնային

ցորենի հասկերը

եւ ամբողջ տարին

գիւղին մեծերն ու փոքրերը

ցորեն ունենային

հա՛ց ունենային

անօթի չմնային:

Երբ ցորենի հատիկները կը ծլէին

Գորը

մե՛ծ շունչով

թոքերը կը լեցնէր

լերան մաքուր օդով

ու գործի կը լծուէր.

եղանը ձեռքը

ոտաբոպիկ

կը պայքարէր

մարախներու պարսերուն դէմ.

երաշտի ժամանակ՝

այսինքն

երբ օրերո՛վ, ամիսներո՛վ

անձրեւ չէր տեղար

ափերով

բուռ-բուռ ջուր կը լեցնէր

ցորենի հասկերուն արմատներուն.

երբ կարկուտ տեղար

կոնակը կը դարձնէր դէպի երկինք,

կարկուտը

Գորին տաքուկ մարմնին վրայ կը

հալէ՛ր

եւ սառած, քարացած կարկուտէն

կը պաշտպանէր հասկերը,

որ ամբողջ տարին

գիւղին

մեծերն ու փոքրերը

ցորեն ունենային

հա՛ց ունենային,

անօթի չմնային:

Օր մըն ալ

լուր տարածուեցաւ  
թէ գիւղին բարձր լեռան վրան  
հրէշ մը յայտնուած էր.

հրէշը

հազար տարուան

անօթի փորով

հսկայ մարմնով

լեռներն պիտի իջներ

պիտի **խժուէր**

ցորենի բոլոր հասկերը:

Լեռը բարձր էր

հրէշը անտեսանելի

սակայն ամէն իրիկուն

պարապ փորէն հնչող

ահեղ ձայնով

հրէշը կը կը սպառնար

**կու գա՛մ**

**կու գա՛մ...**

Սարսափ ինկած էր

մեծ ու փոքր

բոլոր գիւղացիներուն սրտերուն

մէջ:

Առտու մը

Գորը

եղանը ձեռքը

ճամբայ ինկաւ

դէպի բարձր լեռը

**«Կը սպաննե՛մ այդ**

**հրէշը»,** կանչեց

կը սպաննե՛մ

կը սպաննե՛մ...

արձագանգեցին լեռները

**«Եւ ձեր արտերը**

**կը ծփան ցորենով»,**

**ցորենո՛վ**

**ցորենո՛վ...**

արձագանգեցին լեռները-



**«Յախտեա՛ն» ,**  
**յախտեա՛ն**  
յախտեա՛ն...

**«Կը վերադառնամ**  
**քսան մէկ օրէն»:**

Գորը վե՛ր, վե՛ր մագլցեցաւ  
դէպի բարձր լեռան գագաթը,

բարձրացա՛ւ

բարձրացա՛ւ

ու վերջապէս

բարձր լեռան մշուշին մէջ

անհետացաւ գիւղացիներուն

աչքերէն:

Մէկ օր անցաւ.

գիւղացիները կը սպասէին.

քուն չունէին

եւ տակաւին հրէշը կը կանչէր

**կու գա՛մ**

**կու գա՛մ...**

Երկրորդ օրը

հրէշին ձայնը տակաւին կը լսուէր՝

**կու գա՛մ...**

Երրորդ օրը

յանկարծ

հրէշին ձայնը խոստտեցաւ  
 խեղդուեցաւ  
 ու վերջապէս  
 ա՛լ չլսուեցաւ...  
 Լոութին տիրեց  
 բարձր լերան վրան.  
 խաղաղութիւն տիրեց  
 գիւղացիներուն սրտերուն մէջ.  
 հրէշին ձայնը չկա՛ր  
 ուրեմն հրէ՛շն ալ չկար:  
 Գիւղացիները երջանկացան.  
 հիմա պիտի սպասէին.  
 Գորին վերադարձին:  
 Մէկ շաբաթ անցաւ  
 այսինքն եօթը օր՝  
 Գորը չվերադարձաւ...  
 Չէ՞ որ ըսած էր թէ քսանմէկ  
 օրէն կը վերադառնար...  
 Անցաւ երկու շաբաթ  
 այսինքն տասնչորս օր՝  
 Գորը չվերադարձաւ...  
 Եղաւ երե՛ք շաբաթ  
 որ Գորը լեռը բարձրացած էր  
 այսինքն քսանմէ՛կ օր  
 սակայն Գորը չվերադարձա՛ւ...  
 Գիւղացիները հաւաքուեցան  
 բարձր լերան ստորոտը

**Գո՛ր**

**Գո՛ր** կանչեցին,  
**Գորգո՛ր**

**Գորգո՛ր**...

արձագանգեցին լեռները:

Կրկին

**Գո՛ր**

**Գո՛ր**

**ու՛ր ես**

**ու՛ր**

կանչեցին գիւղացիները.

**Գրգու՛ռ**

**Գրգու՛ռ**...

պատասխանեցին լեռները:  
 Գիւղի մեծերն ու փոքրերը  
 օրերով հաւաքուեցան  
 բարձր լերան ստորոտը,  
 Գորին համար  
 երգե՛ր երգեցին,  
 երգե՛ր յօրհնեցին,  
 երգերով շուրջպա՛ր բռնեցին

**«խորո՛տ**

**Գորանի**...

**խորո՛տ**

**Գորանի**...

կանչելով:

Չէ՞ որ զինք շա՛տ կը սիրէին...

Իրենց երգ ու պարին  
 ուրախ ձայները

քարերէն

ժայռերէն

վե՛ր վե՛ր բարձրացան

եւ խունկի պէս պարուրեցին

իրենց համար

տաճար դարձած

ամբո՛ղջ բարձր լեռը:

Վերջապէս

երբ գիւղին մեծերն ու փոքրերը

անդրադարձան թէ

Գորը

պիտի մնար իրենց մօտիկ

բայց անհասանելի

բա՛րձր լերան գագաթը,

միասնաբար

որոշեցին

ճի՛շտ լեռներուն արձագանգներուն

պէս բարձր լեռը՝

**Գո՛ր**

կամ **Գորգո՛ր**  
 կամ **Գրգու՛ն** անուանել:  
 Հազա՛ր տարիներ անցած են այդ  
 օրերէն.  
 Հայերը չեն մոռցած Գորը.  
 բարձր լեռն ալ՝  
 Գրգուռ լեռը  
 միշտ հո՛ն է  
 մեզմէ հեռու  
 սակայն մեր սրտերուն շատ մօտ  
 Վանայ Ծովուն ափերուն...  
 Իւրաքանչիւր ամսուան  
 քսանմէկերորդ օրը

Հայերը կը յիշեն Գորը,  
 կ'երգեն  
 ու երգելո՛ւ կը պարեն  
 Գորին համար  
 իրենց յօրինած երգը՝  
 Խորոտ Գորանին:  
 Հիմա գիտեն թէ  
 ոչ թէ եօթը  
 ոչ թէ տասնչորս  
 ոչ թէ քսանմէկ օր  
 այլ Գորը՝  
 սրտին մէջ կամք  
 մարմնին մէջ կորով  
 աչքերուն մէջ կայծ՝  
**յաւիտեա՛ն**  
 պահապանն է  
 հայոց ցորենի արտերուն  
 որպէսզի  
 մեծեր ու փոքրեր  
 ցորեն ունենան  
 հաց ունենան  
 անօթի չմնան  
 ու՛ր որ ալ ապրին  
 երկիր մուրապին վրան:

